ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ **2019** ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(01.01.2019թ.-31.12.2019թ.)

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԲԱԺԻՆ

-Նախապատրաստվել և անցկացվել են մարզի խորհրդի 4 նիստեր, որոնցում քննարկվել են մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների կատարման, գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման, ոռոգման համակարգերի նախապատրաստության, ոչ հիմնական շինությունների փաստագրման գործընթացի,



մարզի համայնքների կողմից տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի իրականացման ընթացքի և այլ հարցեր: Մարզի խորհրդի նիստերը սահմանված կարգով արձանագրվել են:

-Մարզի 5 համայնքներում **(Հառիճ, Անուշավան, Սպանդարյան, Փանիկ, Հայկավան)** նախապատրաստվել և անցկացվել են տեղական ինքնակառավարման մարմինների հերթական, 2 համայնքում **(Աշոցք, Գետափ)** արտահերթ ընտրություններ, այդ թվում՝ 4 համայնքում՝ **(Հառիճ, Սպանդարյան, Աշոցք, Գետափ)** միայն համայնքի ղեկավարի, 2 համայնքում՝ **(Փանիկ, Հայկավան)** միայն ավագանու անդամների, իսկ Անուշավան համայնքում՝ համայնքի ղեկավարի և ավագանու անդամների: Ընտրությունների արդյունքներով Հառիճ, Սպանդարյան և Անուշավան համայնքների ղեկավարները վերընտրվել են, Աշոցք և Գետափ համայնքներում ընտրվել են համայնքների նոր ղեկավարներ, իսկ Փանիկ, Հայկավան և Անուշավան համայնքներում կազմավորվել են համայնքների ավագանիներ:

- ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2018 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 364-Ա հրամանով հաստատված աշխատանքային ծրագրին համապատասխան, 2019 թվականին ըստ եռամսյակների մարզի թվով 17 համայնքների **(Գեղանիստ, Հայկասար, Վարդաքար, Արթիկ, Արփի, Սարապատ, Լուսակերտ, Գետք, Բենիամին, Ամասիա, Սարատակ, Սպանդարյան, Փանիկ, Փոքր Մանթաշ, Երազգավորս, Լեռնակերտ, Հայրենյաց)** տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ իրականացվել է իրավական և մասնագիտական հսկողություն: Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով համայնքների ղեկավարներին համապատասխան գրավոր առաջարկություններ են արվել՝ հայտնաբերված խախտումները վերացնելու ուղղությամբ առաջարկություններն ընդգրկելու համայնքի ավագանու նիստի օրակարգ,

քննարկելու և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու արձանագրված խախտումները սահմանված ժամկետներում վերացնելու ուղղությամբ: Հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումները և դրանց վերացման ուղղությամբ արված առաջարկությունները համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվել են ամբողջությամբ և հսկողություն իրականացրած պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ համայնքների ղեկավարների կողմից առարկություններ չեն ներկայացվել:

- Համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կազմվել և գործողության մեջ են դրվել արձանագրված խախտումները վերացնելու ժամանակացույցներ, համաձայն որոնց սահմանված ժամկետներում խախտումները ամբողջությամբ վերացվել են որոնց վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

- «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով 2019 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ ՀՀ Շիրակի մարզպետարանում ստացվել են մարզի համայնքների ավագանիների թվով 1663 որոշումներ: Սահմանված ընթացակարգին համապատասխան մարզպետարանի կողմից ուսումնասիրվել են դրանց համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը, որի արդյունքում 921 որոշումներ (55,3%) եղել են իրավաչափ, իսկ 742 (44,6%) ոչ իրավաչափ որոշումների վերաբերյալ կազմվել են առարկություններ և համապատասխան առաջարկություններով ուղարկվել են համայնքների ղեկավարներին, դրանք քննարկվել են համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից և սահմանված կարգով համապատասխանեցվել են ՀՀ օրենսդրությանը:

- Համայնքային ծառայության մասին օրենսդրությամբ սահմանված կարգով մարզի թվով 16 համայնքապետարաններում **(Գյումրի, Մարմաշեն, Աշոցք, Ամասիա, Սարատակ, Հայկավան, Տուֆաշեն, Պեմզաշեն, Նոր Կյանք, Գեղանիստ, Առափի, Մեղրաշեն, Վարդաքար, Արփի, Սարալանջ և Արթիկ)** առկա թվով 71 համայնքային ծառայության թափուր պաշտոնների համալրման համար հայտարարվել են մրցույթներ, ապահովվել է մրցույթների հայտարարությունների հրապարակայնությունը: Վարչության կողմից միջոցներ են ձեռնարկվել հայտարարված մրցույթների պատշաճ անցկացման ուղղությամբ: Հայտարարված մրցույթներից կայացել են 51-ը, թվով 20 մրցույթներ չեն կայացել՝ դիմորդներ չլինելու պատճառով: Կայացած մրցույթների արդյունքում հաղթող է ճանաչվել 46 քաղաքացի, որոնք սահմանված կարգով նշանակվել են համապատասխան պաշտոններում:

- Նախապատրաստվել և անցկացվել են մարզի 12 համայնքների համայնքապետարանների աշխատակազմերի թվով 21 համայնքային ծառայողների ատեստավորումներ:

Աշխատանքներ են տարվել մարզի համայնքների ղեկավարների, ավագանու

անդամների և համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայողների

վերապատրաստման գործընթացի կազմակերպման ուղղությամբ:

Վերապատրաստման գործընթացի արդյունավետությունն ապահովելու նպատակով իրականացվել է պատշաճ հսկողություն, որի արդյունքում վերապատրաստումներն անցկացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ներկայացված չափանիշներին համապատասխան:

Վերապատրաստվել են մարզի 19 համայնքի ղեկավար, 56 ավագանու անդամ և 40 համայնքային ծառայող:

- Անցկացված մրցույթների, ատեստավորումների և վերապատրաստումների արդյունքների վերաբերյալ պարբերաբար տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2009 թվականի հունվարի 26-ի թիվ 05-Ն հրամանով սահմանված համայնքային ծառայողների գրանցամատյանի վարման կարգի համաձայն՝ մարզի համայնքապետարաններից ստացված աշխատակազմերի համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող և պաշտոններից ազատված անձանց վերաբերյալ տեղեկություններն ուսումնասիրվել և սահմանված կարգով մուտքագրվել են համայնքային ծառայողների վերաբերյալ տվյալների միասնական էլեկտրոնային գրանցամատյան:

-Շարունակվել են աշխատանքները համայնքներում առկա համացանցային պաշտոնական կայքերի պատշաճ գործարկումն ապահովելու և դրանց միջոցով տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը բարելավելու ուղղությամբ: Վարչության կողմից մշտադիտարկում է անցկացվել 3000 և ավելի բնակիչ ունեցող մարզի 10 համայնքներում՝ համայնքապետարանների պաշտոնական համացանցային կայքերի մշտական հասանելիությունն ու դրանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված բովանդակությամբ համալրումն ապահովելու ուղղությամբ:

-Աշխատանքներ են տարվել համայնքներում ավագանու նիստերի ու հանրային նշանակության այլ միջոցառումների առցանց հեռարձակումների և տեսանյութերի պատշաճ որակի ապահովման ուղղությամբ, որի արդյունքում մարզի 10.000 և ավելի բնակչություն ունեցող թվով 5 համայնքներում (Գյումրի, Արթիկ, Անի, Ախուրյան, Մարմաշեն) ապահովված է առցանց հեռարձակումների պատշաճ որակը:

- Համապատասխան աջակցություն է ցուցաբերվել մարզի համայնքներին սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքներում: Կատարված աշխատանքների արդյունքում 2019 թվականին ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտները կատարվել են 96.7%-ով, նախատեսված 2,707,824.2 հազար դրամ սեփական եկամուտներից

հավաքագրվել է 2,618,312.5 հազար դրամ: 2019 թվականի 12 ամիսների փաստացի հավաքագրվածի աճի տոկոսը 2018 թվականի համեմատ կազմում է 11.2%, ավել է հավաքագրվել 264 մլն 741 հազար դրամ:

Իրականացվել են մարզպետին, ինչպես նաև պետական կառավարման այլ մարմիններին հասցեագրված և ՀՀ Շիրակի մարզպետարան վերահասցեագրված թվով 250 դիմումների ուսումնասիրության, քննարկման, ինչպես նաև թվով 3640 հանձնարարականների կատարման ու գրությունների նախապատրաստման աշխատանքներ:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԲԱԺԻՆ

ՕՊԵՐԱՏԻՎ ԻՐԱՎԻՃԱԿ

2019 թվականին ՀՀ Շիրակի մարզում արձանագրվել է հանցագործության 1324 դեպք (2018թ. նույն ժամանակահատվածում՝ 1224), նախորդ տարվա համեմատությամբ դեպքերն աճել են 100-ով կամ 8%-ով ավելի:

2019 թվականի ընթացքում մարզում արձանագրվել է **697** արտակարգ դեպք (2018թ. նույն ժամանակահատվածում 551 դեպք), նախորդ տարվա համեմատությամբ դեպքերը աճել են 146-ով կամ 26,4%-ով ավելի:

Հաշվետու ժամանակահատվածում ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ՝ ՀՀ Շիրակի մարզպետարանի, ՀՀ Շիրակի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների ու պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների միջև համագործակցված աշխատանքների կազմակերպման ուղղությամբ, որի արդյունքում ապահովվել է պաշտպանության, արտակարգ իրավիճակների, ոստիկանության և ազգային անվտանգության բնագավառներում օրենսդրությամբ պահանջվող աշխատանքների կատարումը:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

- ՀՀ Շիրակի մարզպետարանի, ՀՀ Շիրակի մարզի զինվորական կոմիսարիատի, ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության, ՀՀ ՊՆ Շիրակի կայազորի ռազմական ոստիկանության և ՀՀ Շիրակի

մարզի տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցված աշխատանքների արդյունքում ապահովվել են 2018 թվականի ձմեռային և 2019 թվականի ամառային և ձմեռային զորակոչերի կազմակերպման ու անցկացման աշխատանքները: 2019 թվականի հունվարի 29-ին, փետրվարի 5-ին, հուլիսի 4-ին և 30-ին, դեկտեմբերի 5-ին անցկացվել են ՀՀ Շիրակի մարզային զորակոչային հանձնաժողովի նիստեր, քննարկվել են տարկետման ներկայացված թվով 267 զորակոչիկների անձնական գործեր:

ՀՀ Շիրակի մարզային զորակոչային հանձնաժողովի նիստերի քննարկումների արդյունքում տրված եզրակացությունները սահմանված կարգով ու ժամկետներում ուղարկվել են ՀՀ պաշտպանության նախարարություն:

Մշտապես ապահովվել է զորակոչիկներին ՀՀ Շիրակի մարզի զինվորական կոմիսարիատից դեպի հանրապետական հավաքակայան ուղարկման պլան-գրաֆիկների տրամադրումը ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչությանը և վերջիններիս կողմից զորակոչիկների ուղեկցումը:

Իրավասու կառույցների համագործակցված աշխատանքների արդյունքում 2018 թվականի ձմեռային զորակոչն ապահովվել է 101%-ով, 2019 թվականի ամառային զորակոչն ապահովվել է 111%-ով:

- Համապատասխան հսկողություն է սահմանվել մարզի համայնքներում այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնողների կողմից կատարվող աշխատանքների և ծառայությունը օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպելու ուղղությամբ:

ՀՀ կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 796-Ն որոշման 1.1-րդ կետի պահանջների համաձայն՝ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն առաջարկներ են ներկայացվել ՀՀ Շիրակի մարզպետարանի կողմից վերահսկվող այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնելու վայրերի (կազմակերպությունների), այդ վայրերում աշխատատեղերի քանակի, բնույթի և տեսակների վերաբերյալ, ինչպես նաև ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխանեցնելու նպատակով, առաջարկություններ են

ներկայացվել՝ ՀՀ կառավարության նշված որոշման մեջ համապատասխան փոփոխություններ կատարելու մասին:

- Զինվորական հաշվառման ընթացիկ աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, մարզի համայնքների ղեկավարներին և համայնքապետարանների համապատասխան աշխատակիցներին մշտապես ցուցաբերվել է մեթոդական աջակցություն: ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի «Զինվորական հաշվառման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի N 657-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1269-Ն որոշումը տրամադրվել է մարզի համայնքների ղեկավարներին և առաջարկվել՝ համայնքի զինապարտ քաղաքացիների հաշվառման գրանցամատյանը վարել վերը նշված որոշման պահանջներին համապատասխան:

-Իրազեկման նպատակով, 2019 թվականի ապրիլի 30-ին մարզի համայնքների ղեկավարներին տրամադրվել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իրականացվող «Ես եմ» և «Պատիվ ունեմ» ծրագրերի վերաբերյալ համառոտ տեղեկատվական թերթիկները:

Նշված ծրագրերն առավել ընդարձակ ներկայացնելու նպատակով 2019 թվականի մայիսի 14-ին հրավիրվել է ընդլայնված խորհրդակցություն համայնքների ղեկավարների, մարզի հանրակրթական դպրոցների տնօրենների և զինղեկների մասնակցությամբ:

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

- 2019 թվականի հունվարի 11-ին ՀՀ Շիրակի մարզպետի կողմից հաստատվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում 2019 թվականի ընթացքում ՀՀ Շիրակի մարզի ղեկավար աշխատողների և մասնագետների պատրաստման պլան-ժամանակացույցը: Դասընթացներին մասնակցել են պլան-ժամանակացույցով նախատեսված բոլոր մասնագետները:

- ՀՀ Շիրակի մարզպետարանում 2019 թվականի հունվարի 29-ին ներկայացվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության 2018 թվականի տարեկան հաշվետվությունը:

- ՀՀ Շիրակի մարզում բնակչության պաշտպանության, հնարավոր արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հետևանքների վերացման, պատասխանատու կազմակերպությունների միջև փոխհամագործակցված աշխատանքների ապահովման նպատակով մշակվել են ՀՀ Շիրակի մարզպետի մի շարք որոշումների նախագծեր, մասնավորապես՝

- 2019 թվականի փետրվարի 4-ի թիվ 21-Ա որոշմամբ հաստատվել է «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2019 թվականի հիմնական միջոցառումների» պլանը,

- 2019 թվականի փետրվարի 28-ի՝ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում 2019 թվականի գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների մասին» թիվ 31-Ա որոշումը,

- 2019 թվականի մարտի 25-ին հաստատվել է ՀՀ Շիրակի մարզի անտառներում հակահրդեհային պահպանության ապահովման միջոցառումների պլանը,

- 2019 թվականի ապրիլի 23-ին՝ արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասների գնահատման Շիրակի մարզային հանձնաժողովի կազմը փոփոխելու նպատակով ընդունվել է «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի փետրվարի 16-ի թիվ 41-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 138-Ա որոշումը,

- 2019 թվականի մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում շտաբային ուսումնավարժություն անցկացնելու» մասին թիվ 147-Ա որոշումը՝ «Հայկական ատոմային էլեկտրակայանի միջուկային և (կամ) ճառագայթային վթարների դեպքում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր քաղաքից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաք տարահանված բնակչության ընդունման և տեղաբաշխման կազմակերպումը» թեմայով:

- 2019 թվականի հունիսի 5-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ջրային տարածքներում ջրահեղձման դեպքերի կանխարգելման մասին» թիվ 244-Ա որոշումը,

- 2019 թվականի սեպտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն անցկացնելու մասին» թիվ 445-Ա որոշումը,

- 2019 թվականի հոկտեմբերի 28-ին՝ քաղաքացիական պաշտպանության Շիրակի մարզային ծառայությունների անվանափոխությամբ պայմանավորված ընդունվել է «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2010 թվակնաի ապրիլի 6-ի թիվ 59-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 547-Ա որոշումը,

- 2019 թվականի նոյեմբերի 1-ին՝ ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ Շիրակի մարզի գործողությունների պլանը փոփոխելու նպատակով ընդունվել է «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2016 թվականի հունիսի 3-ի թիվ 172-Ա որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» թիվ 550-Ա որոշումը,

- 2019 թվականի նոյեմբերի 22-ի՝ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի քաղաքացիական պաշտպանության մարզային ծառայությունների կանոնադրությունները հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի ապրիլի 27-ի թիվ 88-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 570-Ա որոշմամբ հաստատվել է քաղաքացիական պաշտպանության Շիրակի մարզային ծառայությունների կանոնադրությունները:

- 2019 թվականի **մայիսի 30-31-ը** ՀՀ Շիրակի մարզպետարանում և Գյումրու համայնքապետարանում, ՀՀ ԱԻՆ ՓԾ, ՀՀ զինված ուժերի, Հայաստանում տեղակայված ՌԴ զինված ուժերի 102-րդ ռազմաբազայի, Հայաստանում ՌԴ դաշնային անվտանգության

ծառայության սահմանապահ վարչության Գյումրիում տեղակայված սահմանապահ ջոկատի, ՄԱԿ-ի աղետների արձագանքման ազգային թիմի և Հայկական կարմիր խաչի ընկերության հետ համատեղ անցկացվել է **«ՈՒժեղ երկրաշարժի դեպքում հետևանքների վերացում»** թեմայով հրամանատարաշտաբային ուսումնավարժություն, որին մասնակցել են նաև ՀՀ Շիրակի մարզպետարանի վարչությունների պետերը և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների ներկայացուցիչները:

2019 թվականի **հոկտեմբերի 16-17-ը** ՀՀ Շիրակի մարզպետարանի դահլիճում և ՀՀ Շիրակի մարզի Բավրայի սահմանային անցակետում, ՀՀ ԱԻՆ ՓԾ, ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի համակարգման գրասենյակի, ՀՀ Շիրակի մարզպետարանի և պետական համակարգի կառավարման մարմինների հետ

համատեղ անցկացվել է **«Աղետի կամ ռազմական գործողության ժամանակ միգրացիոն հոսքերի կառավարման գործողություններ»** թեմայով համալիր ուսումնավարժություն:

- ՀՀ Շիրակի մարզպետի 2019 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 445-Ա որոշման համաձայն 2019 թվականի հոկտեմբերի 17-

ին ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրի նախկին մշակույթի տան տարածքում անցկացվել է **«Որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպում փլատակներում հրդեհի առկայությամբ»** թեմայով ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն, որում ընդգրկված էին ՀՀ Շիրակի մարզպետարանի և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների աշխատակիցները, ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանի ղեկավար կազմը, ԱԻՆ ՓԾ Շիրակի մարզային փրկարարական վարչության Ամասիայի թիվ 50 հրշեջ-փրկարարական ջոկատը:

ՀՀ Շիրակի մարզպետի 2019 թվականի փետրվարի 4-ի թիվ 21-Ա որոշմամբ հաստատված «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2019 թվականի հիմնական միջոցառումների» պլանի համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզի թվով 10 համայնքներում և 7 խոշորացված համայնքների 20 բնակավայրերում անցկացվել են «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը սելավների սպառնալիքի դեպքում», «Հակառակորդի հարձակման սպառնալիքի դեպքում տարահանման կազմակերպում» և «Բնակչության պաշտպանության մրջոցառումների կազմակերպումը երկրաշարժի դեպքում» թեմաներով շտաբային ուսումնավարժություններ: Մի շարք ուսումնական հաստատություններում անցկացվել են «Պատսպարման կազմակերպումը «Օդային տագնապ» ազդանշանի դեպքում», «ԱԻՆ գործառույթները և խնդիրները բնակչության պաշտպանության բնագավառում» թեմաներով ուսումնավարժություններ, քաղաքացիական պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ ուսումնական հաստատություններում կազմակերպվել և անցկացվել են դասախոսություններ և վարժանքներ:

Կարևորելով քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միջոցառումներում բնակչության ազդարարումը, ՀՀ Շիրակի մարզի 28 համայնքներում կազմակերպվել է առկա չհաշվառված ազդարարման համակարգերի սարքավորումները, որպես գույքային արժեք համայնքի հաշվեկշռում ընդգրկելու գործընթացը:

2019 թվականի մարտի 20-ին, հունիսի 20-ին, սեպտեմբերի 19-ին և դեկտեմբերի 12-ին ՀՀ Շիրակի մարզպետարանում կազմակերպվել է քաղաքացիական պաշտպանության Շիրակի մարզային ծառայությունների շտաբների պետերի հրամանատարական պատրաստության պարապմունքներ՝ ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության մասնագետների մասնակցությամբ:

«Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2019 թվականի հիմնական միջոցառումների պլանով» նախատեսված միջոցառումներն իրականացվել են **ամբողջությամբ**:

2019 թվականի հոկտեմբերի 10-ին ՀՀ Շիրակի մարզպետարանում կազմակերպվել է քննարկում «Շիրակի մարզի քաղաքների և որոշ գյուղերի տարածքների սեյսմիկ վտանգն ու ռիսկը» թեմայով, որի ընթացքում ցուցադրվել են վտանգի ու ռիսկի քարտեզներ, ներկայացվել

են հաշվարկային ու փաստացի տվյալներ նոր ուժեղ երկրաշարժի հնարավոր հետևանքների վերաբերյալ:

Վարչության աշխատակիցները ընդգրկվել են 2019 թվականին մարզում տեղի ունեցած բնական աղետների (կարկտահարություն, ցրտահարություն, երաշտ) պատճառով տուժած՝ Ամասիա, Անի, Աշոցք, Մարմաշեն, Մեծ Մանթաշ, Փոքր Մանթաշ, Գեղանիստ, Լուսակերտ, Հոռոմ, Սարատակ, Հովտաշեն, Լեռնակերտ, Հայկասար, Բայանդուր համայնքներում վնասների չափերն ուսումնասիրող աշխատանքային խմբերի կազմերում:

Մարզի համար նշանակալի ձեռքբերում է եղել Ճապոնիայի միջազգային համագործակցության կազմակերպության կողմից 2019 թվականի մայիսի 6-ին ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչությանը տրամադրված հատուկ փրկարարական տեխնիկան՝ այդ թվում 1 հրշեջ-սանդուղք մեքենա և 5 հիմնական հրշեջ մեքենաներ:

2019թ-ի ընթացքում արտակարգ դեպքերի հետևանքով մարզին հասցված նյութական վնասը կազմել է՝ 4 մլրդ 799 մլն 449հազ 797 դրամ ***(նախնական):*** 2018թ-ին վնասը կազմել է 3մլրդ 279 մլն.482 հազ. 384 դրամ, նյութական վնասի չափը աճել է 1մլրդ 519մլն.967հազ.413 դրամով կամ 46.3%-ով):

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

- Համաձայն ՀՀ Շիրակի մարզի դատախազի միջնորդության՝ ՀՀ Շիրակի մարզում բնակարանային գողությունների դեպքերի բացահայտումների ցուցանիշը բարելավելու նպատակով, ՀՀ Շիրակի մարզպետի մոտ անցկացվել է խորհրդակցություն մարզի դատախազի, ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության պետի և մարզի խոշոր համայնքների ղեկավարների մասնակցությամբ: Համայնքների ղեկավարներին առաջարկվել է համայնքների տարածքում, հատկապես՝ բազմաբնակարան շենքերի մոտ, տեղադրել տեսախցիկներ: Քննարկումների արդյունքում մարզի մի շարք համայնքներում արդեն իսկ տեղադրվել են նոր տեսախցիկներ:

- ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության հետ համագործակցված աշխատանքի արդյունքում պատշաճ կարգով ապահովվել է մարզում անցկացված մի շարք հանրային միջոցառումների ժամանակ հասարակական կարգի պահպանությունը:

ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔԵՐ

Ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ՝ Գյումրիում տեղակայված ՌԴ սահմանապահ ջոկատի, 102-րդ ռազմաբազայի և տեղական ինքնակառավարման մարմինների միջև արդյունավետ համագործակցություն ապահովելու ուղղությամբ:

2019 թվականի հունվարի 25-ին Գյումրիում տեղակայված ՌԴ սահմանապահ զորամասում կայացել է աշխատանքային խորհրդակցություն, որի ընթացքում ամփոփվել են 2018 թվականին կատարված աշխատանքներն ու ձեռքբերումները, կարևորվել են ՀՀ պետական սահմանի պահպանության գործում ՀՀ Շիրակի մարզպետարանի, ՀՀ ոստիկանության, ՀՀ ԱԱԾ, սահմանամերձ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների և ազգաբնակչության միջև առկա սերտ և արդյունավետ համագործակցության ամրապնդումը: Խորհրդակցության ավարտին ՀՀ Շիրակի մարզպետի անունից ՀՀ Շիրակի մարզի սահմանամերձ համայնքների թվով 10 բնակիչներ և սահմանապահ ջոկատի զինծառայողներ պարգևատրվել են շնորհակալագրերով:

2019 թվականի նոյեմբերի 25-ին նույն զորամասում տեղի է ունեցել «2019 թվականի ընթացքում ՀՀ ազգային անվտանգության ծառայության, ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային ստորաբաժանումների և սահմանապահների փոխհամագործակցության, 2020 թվականին այն կատարելագործելու առաջարկությունների վերաբերյալ» թեմայով խորհրդակցություն:

Խորհրդակցության ընթացքում քննարկվել են 2019 թվականի ընթացքում ՀՀ պետական սահմանի պաշտպանությանը, ինչպես նաև սահմանային գոտի մուտք գործելու թույլտվությանը վերաբերող հարցեր: Սահմանապահ զորամասի հրամանատարի տեղակալը ներկայացրել է գյուղատնտեսական աշխատանքներ կատարելու ընթացքում սահմանային գոտի մուտքն ու ելքը ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան իրականացնելու կարևորության մասին: Նշվել է, որ ՀՀ Շիրակի մարզպետարանի և ՀՀ մարզային ուժային կառույցների պատասխանատուների ակտիվ համագործակցության և օպերատիվ արձագանքի շնորհիվ կարգավորվել է սահմանամերձ գյուղերի բնակիչների գյուղատնտեսական տեխնիկայի ժամանակավոր կայանումը սահմանային գոտում:

Մարզում կազմակերպված տարաբնույթ զանգվածային, հրապարակային միջոցառումների անցկացման ընթացքում ապահովվել է մասնակիցների անվտանգությունը ոստիկանության, շտապ բուժօգնության և փրկարար ծառայության համապատասխան ստորաբաժանումների միջոցով (այդ թվում՝ Աշոցքում կայացած դահուկավազքի առաջնություն, ապրիլի 24-ին Մեծ Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված միջոցառումներ, ՀՀ քաղաքացու օրվան նվիրված միջոցառումներ, մայիսի 9-ի Հաղթանակի օրվան նվիրված շքերթ, նոյեմբերի 17-ի Գյումրու տեխնոլոգիական կենտրոնում կազմակերպված «High Glass Party» միջոցառում և այլն):

Քննարկվել և համապատասխան առաջարկություններ ու կարծիքներ են ներկայացվել մի շարք իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ:

Կատարվել են ՀՀ Շիրակի մարզպետին հասցեագրված, ինչպես նաև ՀՀ վարչապետին և պետական կառավարման այլ մարմիններին հասցեագրված և ՀՀ Շիրակի մարզպետարան վերահասցեագրված թվով 74 դիմումների քննարկում, ուսումնասիրություն և արդյունքների վերաբերյալ պատասխան գրությունների նախապատրաստման աշխատանքներ:

Իրականացվել են թվով 544 տարաբնույթ հանձնարարականների ու գրությունների քննարկման, ամփոփման և արդյունքների վերաբերյալ պատասխան գրությունների նախապատրաստման աշխատանքներ:

2019 թվականի ընթացքում Վարչության կողմից ընդամենը կատարվել են ՀՀ Շիրակի մարզպետին հասցեագրված, ինչպես նաև ՀՀ վարչապետին և պետական կառավարման այլ մարմիններին հասցեագրված և ՀՀ Շիրակի մարզպետարան վերահասցեագրված թվով 325 դիմումների քննարկումներ, ուսումնասիրություն և արդյունքների վերաբերյալ պատասխան գրությունների նախապատրաստման աշխատանքներ:

Վարչության կողմից իրականացվել են թվով 4276 տարաբնույթ հանձնարարականների ու գրությունների քննարկման, ամփոփման և արդյունքների վերաբերյալ պատասխան գրությունների նախապատրաստման աշխատանքներ:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ՏԻ ԵՎ ՀԳՄՀ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԱՐԱՄ ԱՆՏՈՆՅԱՆ

10 հունվարի 2020թ.